

ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԱՏԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

Սեռ տերմինը լեզվաբանական գրականության մեջ բազմիմաստ է: *Սեռ* բառով լեզվաբանները նշում են և գոյական խոսքի մասին, և բային բնորոշ քերականական կարգ: Բայի սեռը բայ խոսքի մասի և դիմավոր, և անդեն ձևերին բնորոշ քերականական կարգ է: Բայասեռը լեզվական այն հասկացություններից է, որի վերաբերյալ ոչ միայն հայ, այլև առիաստարակ համաշխարհային լեզվաբանության շատ հակասական կարծիքներ կան: Մ. Գուլման գրում է. «Ոչ միայն հնդեվրոպական, այլև ուրիշ շատ լեզուներում սեռի կարգը առավել ոչ հստակ, առավել բանավիճային պրոբլեմ է»:

Սեռ կոլմից փորձ է արվում զուգադրական քննության ենթարկել բայի սեռի քերականական կարգը (մասնավորապես անցողական բայերը) գրական արևելահայերենում և արևմտահայերենում: Կրող խնդրի նկատմամբ բոլոր բայերը բաժանում է 2 սեռի՝ անցողական և անանցողական:

Անցողական են այն բայերը, որոնք ունեն կամ կարող են ունենալ կրող խնդիր. օր.՝ ասել, պատմել, մոտեցնել, հեռացնել: Արևմտահայ քերականները անցողական են կոչում միայն *-ցն*-ով ձևերը (պատճառականները), որը ճիշտ չէ:

Անանցողական են այն բայերը, որոնք կապված բայիմաստի հետ, ենթակայի հարաբերության հետ լինում են, 2 տեսակ.

1. Ներգործական բայեր, որոնց ենթական ինքն է կատարում գործողությունը. ինչպես՝ Արամը վերցրեց առաքին պատահած գիրքը և ձևացրեց, թե կարդում է: Արևմտահայերեն՝ «Վարդան սանտր ծախող փերեզակեն հագիվ ինքզինքը ազատեց» (Համ.): «Եղ կավռոշը դուշին խանատները կը ներկեն» (Համ.):

2. Պատճառական բայեր, որոնց ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ միայն պատճառ է լինում ուրիշին՝ մի բան կատարելու, ինչպես՝ Որդին բաժակը մոտեցրեց հոր դուղացող շրթունքներին:

Արևմտահայերեն՝ «Այս հաջորդական զուգադիպությունները ինձի հիշեցուցին այն վեպերը» (Շ.Շ.): «Շաշ Գեղամը ամեն ինչ կ'իմացներ անոր» (Ա. Շ.):

Երկու գրականներում էլ ներգործական սեռը սահմանվում է նույն ձևով. Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որի ժամանակ տրամաբանական սուբյեկտի, քերականական ենթակայի կատարած գործողության համար պահանջվում է ուղղական կամ տրական հոլով (արևմտահայերենում միայն հայցական հոլովով – Ռ.Յ.) դրված ուղիղ խնդիր լրացում (տրամաբանական օբյեկտ)¹:

¹ Տե՛ս Մ. Սաստրյան, ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, էջ 221:

Ներգործական սեռի բայերը պահանջում են այնպիսի լրացում, որը պատասխանում է ի՞նչ, ո՞ւմ հարցերին, ինչպես՝ արևելահայերեն՝ Վարդանը ամմիջպես վերցրեց գիրքը: Հատկապես Արշակը շատ էր սիրում հորը:

Արևմտահայերեն՝ «էդ պիչիմ զալըմ կնիկ տեսած չի» (Համ.): Կը սիրեր գրագիտությունը, կը սիրեր գեղարվեստները, կը սիրեր ընկերները, կը սիրեր ուսուցիչները» (Ար. Արփ.): «Բժիշկը քննեց տղան, լեզուն նայեցավ և վճռաբար ըսավ հորը. «Սա տղան միշտ պիտի խոսե» (Ե.Օ.):

Ներգործական սեռի բայերի սեռի խնդիր համդիսացող ուղիղ խնդիրը հիմնականում արտահայտում է 3 իմաստ.

1. Ցույց է տալիս առարկա, որն ստեղծվում է գործողության արդյունքում. օր՝ նամակ գրել, հաց թխել, սեղան պատրաստել:
2. Ցույց է տալիս առարկա, որն ինչ-որ փոփոխության է ենթարկվում. օր՝ տախտակը կտրել, ոչխարը մորթել, միսը կտրտել:
3. Ցույց է տալիս գործողության հետ այս կամ այն կերպ առնչվող առարկա, օր.՝ սիրել աղջկան, արհամարհել տղային:

Ըստ կազմության՝ ներգործական բայերը լինում են 2 տեսակ՝ պարզ հիմքով (արևել.՝ գրել, կարդալ, արևմտ.՝ ախորժիլ, բարդիլ), այսինքն՝ աններածանց և -ացն-, -եցն-, -ցն- ածանցներով բայեր (հիմնական ածանցը - ցն- ն է):

-Ացն-, -եցն-, -ցն- ածանցներով բայեր կարող են կազմվել.

1. ներգործական բայերից, ինչպես՝

արևելահայերեն՝

հիշել - հիշեցնել
խմել - խմեցնել
ուտել - կերցնել
կարդալ - կարդացնել
հասկանալ - հասկացնել
մոռանալ - մոռացնել
զգալ - զգացնել

արևմտահայերեն՝

գողնալ - գողցնել
մոռնալ - մոռցնել
հաւնիլ - հաւնեցնել
ժրել - ժրեցնել
լայնել - լայնցնել
ճանչնալ - ճանչցնել
կարդալ - կարդացնել

2. Չեզոք բայերից ինչպես՝

արևելահայերեն

վազել - վազեցնել
հոգնել - հոգնեցնել
շտապել - շտապեցնել
աճել - աճեցնել
տրտմել - տրտմեցնել
ծիծաղել - ծիծաղեցնել
մրսել - մրսեցնել

արևմտահայերեն

մեռնիլ - մեռցնել
լմննալ - լմնցնել
հոգնիլ - հոգնեցնել
խաղալ - խաղցնել
կաչիլ - կաչցնել
թռչիլ - թռցնել
թուլնալ - թուլցնել

Ժամանակակից արևելահայերենում -ացն-, -եցն-, -ցն- ածանցներ կարող են ստանալ նաև բնածայնական բայերը, որոնք մեծ մասամբ չեզոք են, օր. խոռալ- խոռացնել, խշշալ- խշշացնել, ֆշշալ- ֆշշացնել:

-*ւցն*-, -*եցն*-, -*ցն*- ածանցներով կազմված բայերը այսպես կոչված պատճառական բայեր են: Գրաբարից մենք ժառանգել ենք -*ուց*- ածանցով մի քանի բայեր, որոնք ժամանակին պատճառական են եղել, իսկ հիմա ներգործական են, քանի որ չունեն համապատասխան չեզոք սեռի ձևը: Դրանք են՝

հարուցել, ջեռուցել, հատուցել, մատուցել, վերցնել:

Արևելահայ քերականների մի մասը պատճառականությունը սեռային առում է կոչում, մյուսները՝ ներգործականի քերականական իմաստ²:

Արևմտահայ գրեթե բոլոր քերականները, հետևելով Ա. Սյունյանին, պատճառական բայերին տալիս են անցողական անուն, դրանք դիտում՝ որպես առանձին սեռի բայեր: Նորօրյա քերականները (մասնավորապես Կարո Առաքելյան), հետևելով արևելահայերենին, օգտագործում են պատճառական անվանումը, բայց նրանք էլ են պատճառականները դիտում որպես առանձին սեռ: 2 գրականներում էլ պատճառական բայածները կազմվում են 2 եղանակով՝ ա) ածանցական կամ համադրական, բ) վերլուծական կամ հարադրական:

Ժամանակակից գրական արևելահայերենի պատճառական ածանցն է -*ցն*-, որը ծագում է հին հայերենի -*ուցան*-ից: -*ցն*- պատճառական ածանցը դրվում է կատարյալի հիմքի վրա, այստեղից էլ -*ցն*- ածանցի -*ացն*- և -*եցն*- տարբերակները, որտեղ ա-ն և ե-ն կատարյալի հիմքի ծայնավորներն են: Այլ է պատկերը կատարյալի ցոյական հիմքում. պատճառականի ց-ն դրվում է կատարյալի հիմքի ց-ի կողքին. մեկը դուրս է մղվում. օր.՝ կարցաց+ցն+ել = կարդացցնել → կարդացնել:

Ժամանակակից գրական արևելահայերենում մի քանի բայեր պատճառական ածանցման ժամանակ ցուցաբերում են յուրահատկություն, ինչպես՝ դառնալ- դարձնել, չափազանցել – չափազանցնել:

Փաստորեն այս դեպքում պատճառականության ցուցիչ է դառնում -*մ*- ածանցը: Արևմտահայ գրական լեզվում *անցնել* ոչ պատճառականից համապատասխան պատճառական ձևը տարբերելու համար *ց* և *մ* հնչյունների միջև արտասանվում և գրվում է *ը՝ անցընել*:

Ց և *մ* հնչյունները կողք կողքի են դրվում նաև *հարցնել* և *լցնել* բայերի մեջ, սակայն այստեղ պատճառականության գաղափար չկա (չնայած խոնարհման հարացույցում դրսևորում են քերականական նմանություններ. ն>ր հերթագայություն. օր՝ հարցրու): Պատճառական կազմելիս յուրահատկություն է ունենում *լալ* բայը՝ *լացացնել*:

Ուտել բայը պատճառական կազմելիս երկու գրականներում էլ գործածվում է 2 ձևով՝ *կերցնել* և *ուտեցնել* (ուտել-կեր-կերցնել):

² Տես Մ. Ասատրյան, Չևաբանություն, Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում:

Ածանցման եղանակով պատճառական կազմելիս երկու գրականներում էլ բոլոր բայերը, առանց բացառության, դառնում են *ե* լծորդության. *ե* լծորդը այս դեպքում սեռանիշ է (բոլոր պատճառականները ներգործական սեռի են): Ածանցման համեմատությամբ հակառակ պատկերն է ներկայացնում վերլուծական եղանակը: Այս դեպքում պատճառական են կազմում *տալ* բայի զուգակցությամբ: Ածանցման դեպքում մեծ մասամբ սկզբնատիպ են լինում չեզոք բայերը, վերլուծական եղանակով պատճառական կազմելիս հիմնականում ստանում են ներգործական բայերը, օր.՝ բերել տալ, գրել տալ, ասել տալ, աղալ տալ, որսալ տալ: Նույն պատկերն է նաև արևմտահայերենում:

Առօրյա-խոսակցական ոճում հաճախ հանդիպում են անհարկի կրկնություններ, պատճառական իմաստ արտահայտելու համար կիրառում են միաժամանակ ածանցման և վերլուծական եղանակները, ինչպես՝ *հիշեցնել տալ, զգացնել տալ*: Սա քերականորեն սխալ է, բայց առօրյա- խոսակցական ոճի համար յուրահատկություն է:

Բոլոր ներգործական բայերը (այդ թվում և պատճառականները) պահանջում են ո՞ւմ և ի՞նչ հարցերին պատասխանող լրացումներ:

Ներգործական բայերի համար սեռի խնդիր է ուղիղ խնդիրը: Ըստ ժամանակակից հայերենի կառուցվածքի՝ ուղիղ խնդիրն այն բառն է, որը ներգործականը կրավորականի փոխակերպելիս դառնում է ենթակա: Ուղիղ խնդիրը արևմտահայերենում միշտ դրվում է հայցական հոլովով, արևելահայերենում՝ ուղղական (իրի առման դեպքում) և տրական (անձի առման դեպքում): Միայն մեկ բայ ունենք արևելահայերենում, որի սեռի խնդիրը թե իրի և թե անձի առման դեպքում դրվում է ուղղական հոլովով. ես գիրք ունեմ: ես քույր ունեմ:

Արևմտահայերենի հոլովման հարացույցում ուղղական և հայցական հոլովները ձևականորեն չեն տարբերվում (իհարկե, չհաշված դերանվանական հոլովումը), որի պատճառով էլ հաճախ շփոթվում են ենթական և ուղիղ խնդիրը: Այստեղ էլ իմաստատարբերակիչ դեր ունի շարադասությունը. ենթական նախորդում է ստորոգյալին, ուղիղ խնդիրը՝ հաջորդում, կամ նախադասության մեջ ուղիղ ձևով դրված առաջին գոյականը ենթական է, մյուսը՝ ուղիղ խնդիր. փոխենք շարադասությունը, կփոխվի իմաստը. ինչպես՝ Տղան կը սիրե հայրը: Եվ՝ Հայրը կը սիրե տղան: Արևելահայերեն՝ «Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ...» (Վ. Տ.): Արևմտահայերեն՝ «Մահեն ետքը, չարաշուք անծանոթներ բացած են Հայրիկին գերեզմանը...» (Ա. Ծ.): «Մայրիկին արշավանքը պահ մը կը ցնցեր թմրածները» (Ա. Ծ.): «Հնդիկները բռնեցին աղջիկը, կապեցին ու դրին երկաթուղիի գծերուն վրա» (Ա. Ծ.):

Սակայն վերջերս արևելահայերենի համաբանությամբ կամ ազդեցությամբ արևմտահայերենում մի քանի բայեր սկսել են ուղիղ խնդիր ընդունել անձի առումով, օր.՝ խնայել հացը և խնայել մեղավորին, զարնել թռչուն և զար-

մել Աշոտը, ներել արարքը և ներել աշակերտին³: Այս երևույթը արևմտահայ քերականներին հիմք է տվել, որ այսպիսի ձևակերպում տան. «Ազդել և յաղթել բայերով ցույց տված գործողությունները կ'անցնին առարկաներու վրա, բայց ոչ անմիջականորեն, այլ հոլովակերտ մասնիկներու միջոցով, որովհետև գործողություններ կրող առարկաները կը դրվի տրական և ոչ թե հայցական հոլովով»⁴: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, այստեղ առկա է միայն արևելահայերենի ազդեցությունը, և ասել, որ այս բայերը, թեև ունենում են կրավորական ձևեր, այնուամենայնիվ ներգործական չեն այլ չեզոք, սխալ է:

Այս մասին Յրաչյա Աճառյանը գրում է. «Սեռի գաղափարը չափազանց պարզ է ու հասկանալի, բայց քննելով մի քիչ ավելի մանրակրկիտ կերպով, տեսնում ենք, որ նա դառնում է բավականին խառնակ և շփոթ: Օրինակ՝ սպանվելը կրավորական բայ է, և ընկնել ու մեռնել՝ չեզոք, բայց իմաստի ի՞նչ տարբերություն կա, երբ ասենք, թե «նա մարդասպանի դաճակով սպանվեց, նա մարդասպանի դաճակով ընկավ, նա բժշկի դեղից մեռավ»: Այդ բոլորը միևնույն գաղափարներն են և քերականական ձևեր են, որ զանազան են. մեկը կոչվում է կրավորական և մյուսը՝ չեզոք... այս պատճառով ահա շատ անգամ բայի սեռը որոշել չափազանց դժվար է լինում, որովհետև զանազան ազգեր տարբեր հայացքով են նայում խնդրին. օրինակ՝ հավանել բայը արևմտյան հայոց մեջ չեզոք է, իսկ արևելյան հայոց մեջ՝ ներգործական (կարագին կը հավնի՞ք – կարագը հավանո՞ւմ եք), որովհետև արևմտահայերը հավանել ըմբռնում են իբրև թե «համաձայնել, հաճել», իսկ արևելահայերը՝ «լավ գտնել, լավ համարել, ընտրել» նույնպես տիրելը թե գրաբարի, թե արևմտահայ բարբառի մեջ չեզոք է, իսկ արևելահայ բարբառի մեջ՝ ներգործական (տիրեաց քաղաքին-քաղաքին տիրեց-քաղաքը տիրեց). առաջինները մտածում են իբր «տիրանալը տեր դառնալ», մյուսները՝ «գրավել, նվաճել»: Նույնպես նայել գաղափարը հայերենում չեզոք է, իսկ ֆրանսերենում՝ ներգործական»⁵:

Բանավոր խոսքում շատ հաճախ ներգործական սեռի բայերը գործածվում են առանց ուղիղ խնդրի. սա լինում է այն դեպքում, երբ խոսվում է սովորության մասին, ինչպես՝ ես թախտին պառկած եմ կարդում: Շատ են խոսում:

Նույնպիսի օրինակների հանդիպում ենք նաև արևմտահայերենում, ինչպես՝ Մեր դրացուհին լավ կը պատմե:

Արևմտահայ քերականները (մասնավորապես Քյուրճյանը) ուղիղ խնդիր չունեցող ներգործականները դիտում են իբրև չեզոքներ: Այստեղ խոսքը կրկնասեռության մասին է: Կրկնասեռության երևույթի մասին մանրամասն

³ Տես Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 145:

⁴ Տես Կ. Ստաբլյան, Արդի հայերենի քերականութուն, գիրք II, Պետրոս, 1998, էջ 177:

⁵ Տես Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուներ, հտ. IV, Ա գիրք, Եր., 1959, էջ 72:

խոսում է Ա. Աբրահամյանը, որն մասնավորապես առանձնացնում է այդ երևույթին ծնունդ տվող 5 հիմունք:

1. Իմաստային հիմունքով առաջացած կրկնասեռություն, որը չպետք է շփոթել նույնանուն բայերի հետ, ինչպես՝ մեկնել (բացատրել, պարզել) → նր.

մեկնել (զնալ, հեռանալ) → չք

շրջել (շուռ տալ) → նր

շրջել (ման գալ) → չք

Սրանք կրկնասեռ չեն, տարբեր բայեր են՝ իրենց սեռերով:

Կրկնասեռ են օր.՝ լսել, խնայել, հոգալ, նայել, շանթել, սովորել, սպասել, ստել, քշել, փչել:

2. Կրկնասեռություն՝ խնդրառական-սեռային տեղաշարժերի ընթացքում: Նախ եղել են չեզոք, հետո՝ նաև ներգործական, օր.՝ գերազանցել, գրոհել, թագավորել, իշխել, ծափահարել, հսկել, ձեռնարկել, սպասարկել, ունկնդրել, սկզբում եղել են ներգործական, հետո՝ նաև չեզոք, օր.՝ այցելել, ափսոսել, գգվել:

3. Կրկնասեռություն՝ բայի արտահայտած գործողության հիմնական հատկանշող բնույթի ակտիվացման և եղածի հետ համատեղվելու հիման վրա, չպետք է շփոթել բայի ժամանակավոր փոխաբերական առումների հետ, ինչպես՝ բուրել, հորդել, ճառագայթել, շնչել, տեղալ: օրինակ՝
Ծաղիկները բուրում էին անուշահոտությամբ: ~~→~~

4. Կրկնասեռություն՝ գործողության անցման լիակատար և մասնակի բնույթի հիման վրա: ինչպես՝ խանգարել, վնասել, օրինակներ՝
Թփուտները անընդհատ խանգարում էին նրա ընթացքին: → չք
Չէր սիրում, երբ խանգարում էին իր հանգիստը: → նր

Այստեղ խնդրային հարաբերությունները արտահայտվում են և՛ անմիջական, և՛ կապային կապակցական խնդրառությամբ (մասին, վրա):
Դրանցից են՝ վկայել, ճառել, չարախոսել, պերճախոսել, ճամարտակել:

5. Կրկնասեռություն՝ լծորդության պատմական փոփոխության և նույնացման հիման վրա: Ժամանակակից գրական արևելահայերենում ունենք և խոնարհման մի շարք բայեր, որոնք այժմ նույն լծորդությամբ ունեն սեռային զուգահեռություն, որը տարբեր լծորդությունների՝ պատմականորեն կատարված միօրինականացման արդյունք է: Դրանցից են՝ մարել, մեղմել, երկարել, խամրել, խռովել: Այս բայերի չեզոք նշանակությունն արտահայտվել է / լծորդությամբ, որը գալիս է հնից և որը այժմ էլ պահպանվել է գրական արևմտահայերենում: ինչպես՝ մարել - մարիլ, եղմել - մեղմիլ, երկարել - երկարիլ, խամրել - խամրիլ, խռովել - խռովիլ

Այս բայերը արևմտահայերենում չեզոք սեռի են: Վերոհիշյալ բայերից վերջին երեքը՝ գալիս են գրաբարից:

Օրինակներ՝ Կրակը մարեց: → չբ

«Իմ աչքերի մեջ այնքան կրակներ եմ մարել ես

եվ հոգուս մեջ հուսահատ այնքան աստղեր եմ մարել»: (Ե. Չ.) → նբ

«Գիտես դու մեղմել և ցավ, և խոկում...»: (Վ. Տ.) → նբ

«Եվ ահա տեսար մեղմեց, դալկացավ լճի դեմքը» (Դ.Դ.) → չբ

«-Ո՞վ է՝ անդորր, լուռ գիշերով

Մենությունս խռովում» (Ավ. Իս.) → նբ

Երեխան խռովել էր եղբորից, լաց էր լինում: → չբ

Վիշապն օրեցօր երկարում էր: → չբ

Ամաչում էր ծեռքը երկարել ու մի կտոր հաց խնդրել: → նբ

Սեռային հակադրությունների մասին խոսալիս արդեն նշել ենք, որ արևմտահայերենում շատ են ներգործական-չեզոք հակադրություն կազմող ձևերը, որոնք, սակայն, անպայման տարբերվում են իրարից ձևականորեն . դրանց չեզոքները գրեթե միշտ *ի լծորդության* են, որոնք իրենց կազմում երբեմն ունենում են նաև կրավորականի ու > վ ածանցը: Ռ. Սաքապետոյանի բառարանում այս խմբի բայերից մեզ հանդիպել է ընդամենը 3 բայ, որ *ի լծորդության* չեն. դրանք են՝ *անձկանալ*, *գասրել* և *հղանալ*: Այս երեք բայերն էլ կրկնասեռություն են առաջացնում իմաստափոխության հիման վրա: Անձկանալը կարող է, նեղ դառնալ իմաստներով չեզոք սեռի բայ է, իսկ խիստ ցանկանալ, մաղթել իմաստներով՝ ներգործական: Գասրելը անհագորեն ուտել իմաստով ներգործական է, իսկ շատ ուտելուց ստամոքսը ցավել իմաստով՝ չեզոք: Բերենք արևմտահայերեն օրինակներ՝

նբ

չբ

զտել

զտիլ

խճել

խճիլ

զգեստավորել

զգեստավորուիլ

խոկել

խոկուիլ

Թե ինչո՞ւ դեպքում կրկնասեռ բայերը իրենց կազմում ու > վ ածանց ունեն, իսկ մյուս դեպքում չունեն, այս մասին քերականության գրքերում ոչինչ ասված չկա: Պատճառը թերևս նույնն է. գրական արևմտահայերենում չհամակարգված շատ խնդիրներ կան, որոնք արժանի են առանձին քննության և հնարավորության դեպքում կանդրադառնանք մեր հետազա ուսումնասիրություններում:

ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ար. Արփ. - Արփիար Արփիարյան. Դ. Դ. - Դերենիկ Դեմիրճյան. Ավ. Իս. - Ավետիք Իսահակյան. Ա. Ծ. - Անդրանիկ Ծառուկյան. Գամ. - Գամաստեղ. Շ. Շ. - Շահան Շահնուր. Ե. Չ. - Եղիշե Չարենց. Պ. Ս. - Պարյուր Սևակ. Վ. Տ. - Վահան Տերյան. Ե. Օ. - Երվանդ Օտյան